

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

ՀՀ ՍՓՅՈՒՐՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

109

Քաղաքականություն

Վրաստանի հայերը կրկին կոչ են անում երկրի
իշխանություններին ճանաչել Հայոց ցեղասպանությունը

Ապրիլի 13-ին ԱՄՆ Կոնգրեսում կը յարգեն Հայոց
ցեղասպանության զոհերի յիշատակը

20-րդ դարի ցեղասպանությունների մասին գրքի հեղինակը
կարող է պետրարտուղար դառնալ Հիլարի Քլինթոնից յետոյ

ՀՀ սփյուռքի նախարարություն

ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացաւ «Հայ կնոջ դերը
Սփյուռքում» խորագրով կլոր սեղան

«Հայերի հետքերը Բրազիլիայում»

Կայացաւ ՀՀ սփյուռքի նախարարին կից ատեանի հերթական
նիստը

ՀՀ սփյուռքի նախարարություն այցելեցին սփյուռքահայ
ուսանողներ

Շնորհանդէս ՀՀ սփյուռքի նախարարությունում

«Ցաւի, յիշողութեան եւ պայքարի կոթողներ»

Սփյուռք

Կիելում ցուցադրուեց Ադրբեջանում Հայոց
ցեղասպանության մասին վաերագրական ֆիլմ

Թուրք նախարարը վիրավորել է սփյուռքահայերին

«Ակօս» թերթը՝ Թուրքիայի խորհրդարանում

Տրանսիայի հայերն ու թուրքերը միասին կը հաւարուն
Փարիզի Կոմիտասի արձանի մօտ

Շուեյցարիայի հայոց թեմի նորանշանակ առաջնորդական
ստեղապահը կը ներկայացուի համայնքին

Թուրք Գրող Քեմալ Եայչըն Ներողութիւն Կը Խնդրէ Հայերէն

Խարկովի Հայ համայնքի յաջողութիւնները Փարիզում

ԱՄՆ հայոց եկեղեցիների առաջնորդներն ուղերձ են յղել Սբ
Յարութեան եւ Հայոց ցեղասպանութեան օրերի
կապակցութեամբ

Հայազգի Գլէդիս Բերեջիկլեանը նշանակուել է
աւստրալական նահանգի տրանսպորտի նախարար

Ռումինահայութիւնն այսուհետ առաւել համակարգուած կը
գործի ի շահ Հայաստանի եւ Արցախի

Թուրքիայում Անատոլիայի հայերի դեմ պայքարի գաղտնի
հետախուզութիւն էր ստեղծուել

Կալկաթայում նշուեց Հայոց մարդասիրական ճեմարանի
հիմնադրման 190-ամեակը

Հասարակութիւն

Ամենայն Հայոց կաթողիկոսն իր գնահատանքն է յայտնել Հայ
կանանց միջազգային միութեան անդամներին

Մշակոյթ

Երեւանում կը բացուի Գլենդէյլի «աթանեանէ արուեստի
կենտրոնի ցուցահանդէսը

Աւիկ Սարութեան. Արեւմտեան Հայաստանի բարբառները
ոչնչացման եզրին է

Էմմիի եւրատեսիլեան փրոմո-արշաւը յազեցած է, նա
կ'այցելի Կիւեւ, Քիշնեւ, Նիդեռլանդներ, Աթէնք եւ Վարշաւայ

Յայտարարութիւններ

ՀՀ սփիւռքի նախարարութեան «հայ կնոջ դերը Սփիւռքում
է կլոր սեղան

Քաղաքականություն



Վրաստանի հայերը կրկին կոչ են անում երկրի իշխանություններին ճանաչել Հայոց ցեղասպանությունը

2011-04-09

«մենք, Վրաստանի Հայ Համայնք

կազմակերպությունից ներքոստորագրեալներս, յանուն արդարադատության եւ ժողովրդավարական արժեքների կոչ ենք անում ձեզ միանալ միջազգային քաղաքակիրթ հանրության նախաձեռնությանը եւ Վրաստանի խորհրդարանում նախաձեռնել Օսմանեան Կայսրության տարածքում Հայոց Ցեղասպանության հարցի քննարկումը,- ասուած է ուղերձում:

Իսկ Վրաստանի խորհրդարանի հայազգի պատգամաւորներին Վրաստանի հայկական կազմակերպությունները կոչ են անում մինչեւ ապրիլի 24-ը խորհրդարանի նիստի ժամանակ հանդէս գալ յայտարարութեամբ եւ խորհրդարանին կոչ անել՝ յարգել 1915-1923 թուականների Հայոց ցեղասպանութեաբ անմեղ զոհերի յիշատակը:

Ուղերձի նախաձեռնողը «վրաստանի Հայ համայնքէ հասարակական կազմակերպութիւնն է: Վհհ-ի նախաձեռնութեանը միացել են նաեւ հետեւեալ հասարակական կազմակերպութիւնները. «վրաստանի Հայկական համագործակցութեան կ'ենտրոնը, «վրաստանի Հայ ուսանողների միութիւնը, «վրաստանի Հայ պատանիների միութիւնը, «վրաստանի հայկական

երիտասարդական միութիւնը, «վիրահայերի Միաւորում
«նոր Սերունդէ եւ «թբիլիսեան Հայերի Վեհաժողովէ:
Ապրիլի 24-ին լրանում է 20-րդ դարի առաջին
Ցեղասպանութեան` 1915-1923 թուականներին Օսմանեան
Թուրքիայում Հայոց Ցեղասպանութեան իրականացման 96
տարին: Ցեղասպանութեան հետեւանքով իրենց իսկ
պատմական հայրենիքում ոչնչացուեց աւելի քան 2 միլիոն
մարդ: Ցեղասպանութիւնը որակւում է որպէս մարդկութեան
դէմ յանցագործութիւն, իսկ մարդկութեան դէմ
յանցագործութիւնը վաղեմութեան ժամկէտ չունի:

Մինչ օրս Հայոց ցեղասպանութիւնը ճանաչել է աւելի քան 20
երկիր, ինչպէս նաեւ միջազգային կազմակերպութիւն, այդ
թում` Եւրախորհրդարանը եւ Եւրախորհուրդը: Բազմաթիւ
երկրներում ընթանում է Հայոց Ցեղասպանութեան
քննարկման եւ ընդունման գործընթաց (օրինակ` ԱՄՆ,
Իսրայէլ, Իսպանիայ, Բուլղարիայ, Սերբիայ եւ այլն), ասում է
«վրաստանի Հայ Համայնքի-ի մամուլի ծառայութեան
հաղորդագրութեան մէջ:



**Ապրիլի 13-ին ԱՄՆ Կոնգրէսում կը
յարգեն Հայոց ցեղասպանութեան զոհերի
յիշատակը**

2011-04-08

ԱՀՀ Խորհրդի անդամ Էննի Տոտան եւ
ԱՀՀ գործադիր տնօրէն Բրայեան Արդունին քննարկել են
ԱՄՆ հայ համայնքի համար հետաքրքրութիւն ներկայացնող

հարցերն ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի փոքրամասնության առաջնորդ Սթենի Հոյերի, դեմոկրատական կուսակցութիւնից կոնգրեսական Շելլի Բերքլիի եւ Մերիլենդից ընտրուած կոնգրեսական Ջոն Սարբանեսի հետ:

Կոնգրեսականների հետ հանդիպման ընթացքում քննարկուել են Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին ամերիկեան օգնութեան տրամադրման հետ կապուած հարցեր:

Ինչպէս յայտարարել է Էննի Տոտան, ապրիլի 13-ին ԱՄՆ Կոնգրեսում Հայաստանի աջակցման խմբի հովանու ներքոյ տեղի կ'ունենայ Հայոց ցեղասպանութեան 96-ամեակին նուիրուած ոգեկոչման միջոցառում:



20-րդ դարի ցեղասպանութիւնների մասին գրքի հեղինակը կարող է պետքարտուղար դառնալ Հիլարի Բլինթոնից յետոյ

2011-04-04

The New York Times-ի կարծիքով, Սամանտայ Փաուերը Հիլարի Բլինթոնի հետ Լիբիայի նկատմամբ քաղաքականութեան գլխաւոր ճարտարապետն է եւ նրա ազդեցութիւնը Սպիտակ տանն օրըստօրէ աճում է: Եթէ Բլինթոնը հրաժարական տա, ապա Փաուերը ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարի պաշտօնի առաջին թեկնածուներից կը լինի: Բայց դա այն դէպքում, եթէ Օբաման յաղթի ընտրութիւններում:

Փաուերը սկսել է իր լրագրողական գործունէութիւնը

Բոսնիայում, երբ 22 տարեկան էր եւ եղել է երկրագնդի համարեա բոլոր թէժ կէտերում: Նա 2002-ի Պուլիտցերեան մրցանակի յաղթող է «խնդիր դժոխքիցէ ցեղասպանութիւնների մասին գրքի համար, որում պատմում է նաեւ ցեղասպանութեան հանդէպ ԱՄՆ արտաքին քաղաքականութեան դիրքորոշման մասին:

«հայաստանում, նացիստական Գերմանիայում, Կամբոջայում եւ Ռուանդայում ցեղասպանութիւնները տեղի են ունեցել այն պատճառով, որ պետական իշխանութիւնները դրա վրայ աչք են փակել, իսկ առանձին մարդիկ ընտրել են չմիջամտելու քաղաքականութիւնը: Ամենատարածուած պատասխանն է՝ «մենք չգիտենք: Դա սուտ էէ,- կարծում է Սամանտայ Փաուերը:

ՀՀ սփիւռքի նախարարութիւն



ՀՀ սփիւռքի նախարարութիւնում կայացաւ «Հայ կնոջ դերը Սփիւռքում» խորագրով կլոր սեղան

2011-04-08

Կլոր սեղանի նպատակն էր բնութագրել եւ արժեւորել հայ կնոջ իւրայատուկ տեղն ու դերը հայ կեանքում, անդրադառնալ Սփիւռքում նրա կատարած ազգապահպան դերին, հայ կնոջ դերին ընդհանրապէս՝ որպէս ընտանիքի սրբութեան, պատուի ու արժանապատուութեան պահպանողի եւ նոր սերնդի առաջին դաստիարակի պարտականութիւնները կատարողի:

Բացման խօսքով հանդէս եկաւ ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը: Շնորհաւորելով հայ կնոջը մայրութեան

Եւ գեղեցկութեան տօնի առթիւ՝ տիկին Հ.Յակոբեանը մաղթեց առողջութիւն եւ երջանկութիւն՝ ընդգծելով կնոջ անգնահատելի դերակատարութիւնը հայ հասարակութիւնում:

Այնուհետեւ ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատակիցներ Ա.Ստեփանեանն ու Ս.Պօղոսեանը զեկուցեցին համապատասխանաբար «Հայրենադարձութիւնը եւ հայ կինը» եւ «Հայ կինը աւանդական եւ արդի հասարակութեան մէջ՝ Հայաստանում եւ Սփիւռքում» թեմաներով:

Կլոր սեղանի ընթացքում անդրադարձ կատարուեց հայ կնոջ դերին ազգային ինքնութեան ձեւաւորման ու պահպանութեան գործընթացում, հասարակական-քաղաքական, մշակութային կեանքում, գիտութեան եւ կրթութեան բնագաւառում:



«Հայերի հետքերը Բրազիլիայում»

2011-04-06

Այս տարի ՀՀ սփիւռքի նախարարութիւնը նախատեսում է իրականացնել «հայերի հետքերը

Բրազիլիայում» խորագրով միջոցառումների շարք, որի շրջանակներում կը հրատարակուի գիրք, տեղի կ'ունենան մի շարք համերգներ ու ցուցահանդէսներ, տեղեկացնում է նախարարութեան Ամերիկայի հայ համայնքների վարչութիւնը:

Բրազիլիայում ապրող հայերի պատմութիւնը ներկայացնող ցուցահանդէսն ամենայն հաւանականութեամբ կը բացուի այս տարուայ սեպտեմբերի եօթին՝ Բրազիլիայի անկախութեան օրը եւ կտելի մինչեւ Հայաստանի անկախութեան տօնը՝ սեպտեմբերի քսանմէկը: Միջոցառումներին կը մասնակցեն նաեւ բրազիլահայ յայտնի դերասանուհի Արաքսի Բալաբանեանը եւ լուսանկարիչ Մանուկ Փոլադեանը:

Բրազիլիայում հայերի ներգաղթի եւ ինտեգրման մասին պրոֆէսոր Յակոբ Քեշիշեանի հեղինակած գիրքը լոյս կը տեսնի երեք լեզուներով՝ հայերէն, անգլերէն եւ պորտուգալերէն: Գրքի տպագրութեան ծախսերը՝ երկու մլն. Դրամ, կը հոգայ ՀՀ սփիւռքի նախարարութիւնը:

«հայերի հետքերը Բրազիլիայումէ ծրագրի շրջանակներում տեղի կ'ունենան նաեւ մի շարք դասական համերգներ՝ բրազիլահայ անուանի երաժիշտների եւ Հայաստանի նուագախմբերի մասնակցութեամբ: Հայկական համերգասրահներում մասնաւորապէս կը հիւրընկալուեն բրազիլական երաժշտասէր հանրութեանը քաջ յայտնի, ծագումով հայ երաժիշտներ Ժոան Կոլյումջեանը, Սօլանժ Մերդինեանը, Գոհար Վարդանեանը եւ այլք:



Կայացաւ ՀՀ սփիւռքի նախարարին կից ատեանի հերթական նիստը

2011-04-05

Օրակարգում ընդգրկուած էր երեք հարց՝ ՀՀ սփիւռքի նախարարութեան,

Համաշխարհային հայկական կոնգրէսի եւ Ռուսաստանի հայերի միութեան մասնակցութեամբ կազմակերպուող 2011թ. համահայկական մրցանակաբաշխութեան մասին, «Հարաւային (Լատինական) Ամերիկայի կրթամշակութային հիմնախնդիրների լուծմանն աջակցութեան» ծրագրի շրջանակներում 2011թ. կատարուելիք աշխատանքների մասին, ՀՀ սփիւռքի նախարարութեան աշխատակազմի Մերձաւոր եւ Միջին Արեւելքի հայ համայնքների վարչութեան հաշուետուութիւնը եւ ընթացիկ հարցեր:

ՀՀ սփիւռքի նախարարութեան աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչութեան պետ Ա.Միսիթարեանը մանրամասներ ներկայացրեց ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ Համաշխարհային հայկական կոնգրէսի ու Ռուսաստանի հայերի միութեան կողմից կազմակերպուող «Հայապահպանութեան գործում ունեցած նշանակալի աւանդի համար» համահայկական ամենամեայ մրցանակաբաշխութեան շրջանակներում 2011թ. անցկացուելիք մրցոյթի երեք անուանակարգերի վերաբերեալ՝ «Մայրենիի լաւագոյն ուսուցիչ», «Լաւագոյն երիտասարդական կազմակերպութիւն» եւ «Կտոր մը Հայրենիք»: Իւրաքանչիւր անուանակարգում սահմանուած են գլխաւոր, առաջին, երկրորդ, երրորդ կարգի եւ խրախուսական մրցանակներ:

«Հարաւային (Լատինական) Ամերիկայի կրթամշակութային հիմնախնդիրների լուծմանն աջակցութեան» ծրագրի շրջանակներում 2011թ. կատարուելիք աշխատանքների մասին զեկուցեց ՀՀ սփիւռքի նախարարութեան

աշխատակազմի Ամերիկայի հայ համայնքների հետ կապերի վարչութեան պետի պաշտօնակատար Գ.Դաբադեանը: Ըստ այդ ծրագրի 2011թ. նախատեսւում է Հարաւային Ամերիկայի հայկական կրթօջախներին ուղարկել կրթական եւ ուսումնասօժանդակ նիւթեր, կազմակերպել Անանիա Շիրակացի ճեմարանի եւ Արգենտինայի Միսիթար Սերաստացի վարժարանի սաների շախմատի մրցոյթ: Ծրագրի շրջանակներում 2011թ. նախատեսւում է Հայաստանում` Երեւանում եւ Գիւմրիում, կազմակերպել Ուրուգուայի «Կռունկ» երգչախմբի համերգը, աջակցել Սան Պաուլոյի համալսարանի հայագիտական ամբիոնի աշխատանքներին, կազմակերպել «Հայերի հետքերը Բրազիլիայում» խորագրով միջոցառումներ, այդ թւում` գրքի հրատարակութիւն, ցուցահանդէս, համերգ, կլոր սեղան քննարկում եւ այլն:

ՀՀ սփիւռքի նախարարութեան Մերձաւոր եւ Միջին Արեւելքի հայ համայնքների վարչութեան կողմից 2010թ. կատարած աշխատանքների վերաբերեալ հաշուետուութիւնը ներկայացրեց վարչութեան պետ Ա.Դումանեանը: Նա անդրադարձաւ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի հայ համայնքների անձնագրերի ստեղծման եւ համալրման, տարածաշրջանում գործող հանրակրթական հաստատութիւններին ուսումնական գրականութեամբ ապահովելու, Հայաստանում բնակուող իրաքահայերի ինտեգրման եւ այլ ծրագրերի ուղղութեամբ կատարուած աշխատանքներին:

Նախարար Հ.Յակոբեանը ատեանի անդամներին

մանրամասներ ներկայացրեց մարտի 23-ից ապրիլի 1-ը ԱՄԷ, Մինգապուր եւ Աւստրալիա կատարած այցի վերաբերեալ:



ՀՀ սփիւռքի նախարարութիւն այցելեցին սփիւռքահայ ուսանողներ

2011-04-05

Համահայկական ծրագրերի վարչութեան կողմից ուսանողներին

ներկայացուեց նախարարութեան գործունէութիւնն ու նպատակները, նախարարութեան կողմից իրականացուող ծրագրերը՝ մասնաւորելով յատկապէս «Ուսանողական գարուն» եւ «Արի տուն» ծրագրերը:

Գիտակրթական ծրագրերի բաժնի պետ Ս. Համբարեանը լսեց ուսանողների սպասելիքներն ու ակնկալիքները նախարարութիւնից եւ կոչ արեց նրանց լինել աւելի ակտիւ, մասնակցել նախարարութեան ծրագրերին, իրենց վստահ զգալ սեփական Հայրենիքում՝ աւելացնելով, որ սփիւռքի նախարարութիւնը միշտ պատրաստ է լսել եւ աջակցել նրանց:

Հիւրընկալուող ուսանողներն իրենց թեկնածուին առաջադրեցին «Սփիւռքահայ ուսանողների խորհրդում»:



Շնորհանդէս ՀՀ սփիւռքի նախարարութիւնում

2011-04-05

Միջոցառմանը բացման խօսքով հանդէս եկաւ ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը:

Ներկայ էին Հայաստանի գրողների միութեան

նախագահ Լ.Անանեանը, «Արմինիան Թայմս» ամսաթերթի գլխաւոր խմբագիր Արթուր Խանումեանը, ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն.Մարտիրոսեանը, ընդհանուր առաջ աւարտուած ՀՀ սփիւռքի նախարարին կից ատեանի նիստին մասնակից անդամները, հասարակական եւ ստեղծագործական կազմակերպութիւնների դեկավարներ եւ այլք:

Կարելորելով Հայաստանում ամսաթերթի հրատարակումը՝ ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը նշեց նախարարութեան հիմնադրման օրուանից Սփիւռքում գործող հայկական զանգուածային լրատուամիջոցների հետ ակտիւ համագործակցութեան մասին: Տիկին Հ.Յակոբեանը խոստացաւ բոլոր հնարաւոր միջոցներով աջակցել «Արմինիան Թայմս» ամսաթերթին՝ ընդգծելով, որ նախարարութեան հետ սերտ համագործակցութեան արդիւնքում ամսաթերթը լուսաբանում է Հայաստանի Հանրապետութիւնում եւ Սփիւռքի հայկական համայնքներում տեղի ունեցող իրադարձութիւնները, ինչպէս նաեւ անդրադառնում է Հայաստան-Սփիւռք գործակցութեանն ուղղուած ծրագրերին եւ ՀՀ սփիւռքի նախարարութեան գործունէութեանը:

Ամսաթերթի գլխաւոր խմբագիր Ա.Խանումեանը, կարելորելով ՀՀ սփիւռքի նախարարութեան հետ համագործակցութիւնը, ընդգծեց ՀՀ Նախագահի կողմից ՀՀ սփիւռքի նախարարութեան ստեղծման անհրաժեշտութիւնը եւ Սփիւռքի կողմից այդ քայլի սպասուած լինելը: Նա նշեց նախարարութեան միջոցով Հայրենիք-Սփիւռք կապերի եւ

գործակցության ակտիացման փաստը՝ անհրաժեշտութիւն համարելով ամրապնդել եւ հզորացնել Հայրենիք-Սփիւռք կամուրջը:

Ա.Խանումեանի խօսքով հայերէն եւ ռուսերէն լոյս տեսնող ամսաթերթը կը հրապարակուի նաեւ անգլերէն, իսկ ապրիլի վերջին ամսաթերթը կունենայ նաեւ էլեկտրոնային տարբերակ: Ա.Խանումեանը յաւելեց, որ Մոսկուայում ամսաթերթը լոյս է տեսնում յիսուն հազար տպաքանակով, իսկ Հայաստանում՝ դեռեւս հազար, սակայն շուտով տպաքանակը կաւելանայ:

Շնորհանդէսին ներկայ էին նաեւ ՀՀ սփիւռքի նախարարին կից ատեանի անդամները, որոնք մասնակցել էին նոյն օրը տեղի ունեղած ատեանի նիստին:



«Ցաւի, յիշողութեան եւ պայքարի կոթողներ»

2011-04-04

Այն աշխարհում Հայոց Յեղասպանութեան զոհերի յիշատակի առիթով կառուցուած յուշարձանների համահաւաք վաւերագիր մատեան է, ուր իւրաքանչիւր կոթող փաստում է Օսմանեան Թուրքիայի կողմից

մարդկութեան ու քաղաքակրթութեան դէմ ոճրագործութեան դատապարտումը: «նախաձեռնելով պատկերագրքի ստեղծումը՝ ՀՀ սփիւռքի նախարարութիւնը նպատակ է ունեցել մէկ գրքի մէջ ամփոփել Հայաստանի

Հանրապետությունում, Լեռնային Ղարաբաղի
Հանրապետությունում եւ արտերկրում գտնուող
յուշակոթողները՝ որպէս չխամրող յիշողութիւն ցաւի եւ
ողբերգութեան, պետութիւնների կողմից Հայոց
Ցեղասպանութեան դատապարտման եւ նոր
ցեղասպանութիւնների կանխարգելման անհրաժեշտութիւնէ,-
իր խօսքում գրում է ՀՀ սփյուռքի նախարար Հրանդ
Յակոբեանը:

XIX դարի վերջը եւ XX դարի սկիզբը հայ ժողովրդի համար
ճակատագրական ժամանակաշրջան էր: Օսմանեան
կայսրութիւնը ծրագրեց եւ իրագործեց հայոց Մեծ Եղեռնը:
Տեղահանուեցին, արքայուեցին, կրօնափոխ արուեցին ու սրի
զոհեր դարձան հարիւր-հազարաւոր հայեր: Այս իրողութիւնը
ժամանակին դատապարտեցին օտարագգի
առաջադէմ հասարակական-քաղաքական գործիչներ ու
մտաւորականներ Հենրի Մորգենթաուն, Արմին Վազները,
Աննա Հեդիգ Բեօլը, Ֆրանց Վերֆելը, Եօհաննէս Լեփսիուսը,
Անատոլ Ֆրանսը, Բենեդիկտոս XV-ը, Ֆրիտեօֆ Նանսենը եւ
այլք:

Աշխարհի տարբեր ծագերում /Արգենտինա, Բրազիլիա,
ԱՄՆ, Կանադա, Աւստրալիա, Իրան, Սիրիա, Լիբանան,
Հնդկաստան, Եգիպտոս, Աւստրիա, Բելգիա, Բուլղարիայ,
Գերմանիա, Ֆրանսիայ, ՌԴ, ՀՀ եւ այլուր/ ապրող հայի
յիշողութիւնը, որ նաեւ ճակատագիր է, ստիպում է ունենալ
հայ մնալու գիտակցութիւնը: Ժողովածուն բացում է Երեւանի
Ծիծեռնակաբերդի բարձունքում կառուցուած յուշահամալիրի
ազդու պատկերով:

Պատկերագրքում զետեղուած իւրաքանչիւր խաչքարի, իւրաքանչիւր յուշարձանի մէջ ծածկագրուած լռութիւն կայ, որ ներըմբռնելի է եղելութեան ժամանակի ռեզոնանսում, քանզի իւրաքանչիւր հայի հոգում ողջ հայութիւն է ապրում, Սկզբի ու Վերջի միջեւ՝ շարունակական, որ Ընթացքն է՝ յարատեւ, առանց դադար, ինչպէս Դանիէլ Վարուժանն է ասում՝ «...արիւնից պիտի ծնուին կակաչներ, պիտի կանգնին գերեզմանին մէջ իրենց...»:

Ճակատագրի ու պատմութեան ներքին դրաման ամբողջանում է գիրքը թերթելիս, աշխարհի ընկալումը երեւում է միջնորդուած բանականութեամբ չտրուող կոթողների յաղթահարուող պատկերներով, որոնք նոյն աշխարհը դարձնում են տեսիլք, վերակենդանացնում նզովեալ ճանապարհների, աղէտի ու արքայի անվերջ զարհուրանքը, որ մահուան յիշողութեան յաճախանքն ունի:

Աշխարհը եղել է ու կայ, ու աշխարհը մեծ է, ու անյայտի հակադրուած որոնումը պարփակում է անիծեալ ժամանակի ու մի ողջ սերնդի գոյաբանական ողբերգութիւնը:

«ցաւի, յիշողութեան եւ պայքարի կ'ոթողներէ պատկերագիրքը եւս մի յուշարձան է, որ իրական է, եւ թւում է՝ անիրական, ինչ-որ մի ժամանակ տեսնուած տեսիլք, յուշ-ապրում, զարթուն ողբերգութիւն: Ու ջղերի լարումից կծկուած բոցի մի տեսակը՝ սպիտակ լոյսը, անընդհատ յիշեցնում է անապատի շիկացող տեսարանները, որոնցից վեր դատարկ երկինքը բերնեբերան լցւում է հողի լռութեամբ, համաշխարհի

աշխարհագրութիւնը նոյնանում է հայի հոգու
աշխարհագրութեանը: Ծածկագրուած այս լռութեամբ էլ
վերծանում են մարդ-գագանի հնարաւոր բոլոր
կարողութիւնները, որոնցից փրկուածները յետոյ դարձել
են օտար ափերում դեգերող միայնակ աստղեր ու ձեւաւորել
հայկական ՍՓԻԻՌՔԸ:



Մփիւոք



Կիւում ցուցադրուեց Ադրբեջանում Հայոց ցեղասպանութեան մասին վաւերագրական ֆիլմ

2011-04-10

Ուկրաինացի հանդիսատեսին
ցուցադրուեցին փաստագրական վկայութիւններ, որոնք
պատմում են հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի
մասին: Ցուցադրութիւնից առաջ Analitika ՏՎԿ փորձագէտ
Երուանդ երուանդեանը պատմեց Օսմանեան կայսրութիւնում
Հայոց ցեղասպանութեան պատմութիւնը, ինչպէս նաեւ
Բաքում, Սումգայիթում եւ Մարաղայի հայերի ջարդերի
մասին: Կայացաւ քննարկում «հայոց ցեղասպանութիւն`
անպատժելիութիւնը կրկնութեան է յանգեցնում է թեմայի
շուրջ: Քննարկման մասնակիցներն ուշադրութիւն դարձրեցին
այն փաստին, որ Ադրբեջանում հայերի ջարդերը XX
դարասկզբի Հայոց ցեղասպանութեան շարունակութիւնն են:
Եթէ ժամանակին արդար գնահատական տրուէր Հայոց
ցեղասպանութեանն Օսմանեան կայսրութիւնում, չէին լինի
յետագայում տեղ գտած ցեղասպանութիւնները:

Միջոցառման ժամանակ ներկայացուեց նաեւ

<http://maragha.org> ինտերնետ-նախագիծը, որը բացայայտում է Մարաղայում խաղաղ հայ բնակիչների հետ սարսափելի հաշուեյարդարի իրական փաստերը:



Թուրք նախարարը վիրավորել է սփյուռքահայերին

2011-04-08

Թուրքական Aksam-ի փոխանցմամբ՝ Էգեմեն Բաղըշը նշել է, թե Հայոց

ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը հակասում է խօսքի ազատությանը:

Թուրք նախարարը յայտարարել է, թե նման նախագծերն ի յայտ բերող հայկական սփյուռքի ներկայացուցիչները «ատելության վաճառականներ էն:

Նշենք, որ Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությանը մօտ կանգնած հայկական աղբիւրների տուեալներով, այդ կուսակցութիւնը որոշել է մայիսի 4-ին օգտագործել խորհրդարանի ամբիոնը (այդ օրը խորհրդարանականներն իրաւունք ունեն օրինագծեր ներկայացնել), որպէսզի քննարկման ներկայացնեն Հայոց ցեղասպանութիւնը ժխտելու համար քրեական պատիժ սահմանելու մասին 2006-ի հոկտեմբերի 12-ին ընդունուած օրինագիծը վաւերացնելու հարցը:

NEWS.am



**«Ակօս» թերթը` Թուրքիայի
խորհրդարանում**

2011-04-08

Ինչպէս գրել է թուրքական «միլիյեթը», այս որոշումն ընդունուել է քրդամետ «խաղաղութիւն եւ ժողովրդավարութիւն» կուսակցութեան պատգամաւոր Ուֆուք Ուրասի առաջարկով: Որոշումը կայացուել է այն ժամանակ, երբ թերթը պատրաստում էր տոնել իր 15-ամեակը:

Յիշեցնենք, որ «ակօսը» հիմնադրուել է 1996թ հայազգի Հրնատ Դինքի կողմից, ով սպանուել է 2007-ին` թուրք ծայրահեղականի կողմից:

NEWS.am

**Տրանսիայի հայերն ու թուրքերը միասին կը հաւարուեն
Փարիզի Կոմիտասի արձանի մօտ**

2011-04-08

Ինչպէս յայտնում է Nouvelles d'Arménie-ին, ակցիան կազմակերպուել է ի նշան մերձեցման ու փոխադարձ յարգանքի:

«մենք միասին ենք նախաձեռնութեան անդամները կը հաւարուեն Կոմիտասի արձանի մօտ:

Միջոցառումը կոչուած է ցուցադրելու «պատմական ճշմարտութեան ու մարդկային բաց յարաբերութիւնների վրայ խարսխուած ապագայի կենսունակութիւնը:

Հայերը չեն փակի դուռը բարի կամքի տեր թուրքերի առջև, ինչպէս նաեւ թուրքերը աչք չեն փակի հայերի ցաւի վրաէ,-
ասում է «մենք միասին ենք յայտարարութեան մէջ:

Շուէյցարիայի հայոց թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահը կը ներկայացուի համայնքին

2011-04-08

Ապրիլի 9-ին Հայր Մեսրոպը ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի հետ կժամանի Ժնեւ, յայտնում է Սբ Էջմիածնի մամլոյ դիւանը:

Գերագոյն հոգեւոր խորհրդի յանձնարարութեամբ ապրիլի 10-ին, Ժնեւի Ս. Յակոբ առաջնորդանիստ եկեղեցում, Շուէյցարիայի հայոց թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահը Յովնան Սրբազանի կողմից կը ներկայացուի հայ համայնքին:



Թուրք Գրող Քեմալ Եալչըն Ներողութիւն Կը Խնդրէ Հայերէն

2011-04-07

Մէկ օր առաջ, նոյն գիրքի ներկայացումը կազմակերպուած էր Սալոնիքի «Տէր Ջաքարեան» սրահէն ներս:

Հայ եւ յոյն ներկաներով լեցուն սրահին մէջ տեղի ունեցաւ գիրքին յունարէն հրատարակութեան ներկայացումը՝ ՀՅԴ Յունաստանի կեդրոնական կոմիտէի, Հայ Դատի յանձնախումբի, ՀԿ Խաչի, Համազգայինի եւ ՀՄԸՄի շրջանային վարչութեանց

ներկայացուցիչներու, հայկական վարժարաններու
տնօրէնութեանց, ուսուցիչներու ու մամլոյ
ներկայացուցիչներու մասնակցութեամբ:

Գերմանիա բնակող թուրք գրող Քեմալ Եալչըն, թուրք
հեղինակներու առաջիններէն է, որ անդրադարձած է
հայկական նիւթերու, մասնաւորապէս՝ իսլամացած ու
քողածածկ հայերու, տեղահանութիւններու, Թուրքիոյ կողմէ
Բ. Համաշխարհային պատերազմին ընթացքին հայերու եւ ոչ-
մահմետական մնացեալ քաղաքացիներուն հանդէպ
կիրարկուած քաղաքականութեան, երբ հարկերու վճարման
հսկայ գումարներ պարտադրուեցան՝ ոչնչացնելով մեծ
ջանքերով ապահովուած հարստութիւններ, եւ այլն:

Քեմալ Եալչընի այս գիրքը Թուրքիոյ մէջ բիրտ

«ընդունելութեան» արժանացաւ, երբ կրակի տրուեցաւ ուրիշ
գիրքերու հետ: Այս իրողութիւնը սակայն բնաւ արգելք չեղաւ,
որ գիրքը թարգամանուի ու տարածուի այլ երկիրներու մէջ:

«Սիրելի քոյրեր, սիրելի եղբայրներ եւ ընկերներ. սիրով եւ
յարգանքով կը դիմեմ ձեզ» խօսքերը հայերէն, յունարէն եւ
թրքերէն լեզուներով արտասանելով՝ թուրք գրագետը սկսաւ
իր խօսքը:

Ապա ան, ի միջի այլոց, հետեւեալ խօսքերը արտասանեց.

«Շատեր են անոնք, որոնք երկու տեսակ հարցում կ' ուղղեն
ինձի. առաջին՝ դուն հայկական ծագո՞ւմ ունիս, անոր համար
ալ հայերու վերաբերող գիրքեր կը գրես: Երկրորդ՝ չե՞ս
վախնար:

«Այսպիսի հարցումներու ես միշտ նոյն պատասխանը կու
տամ եւ այժմ ձեզի ալ կ' ըսեմ. ես թուրք ծնողներու, սիւննի

մահմետական ընտանիքի գաւակ եմ: Որքան ես գիտեմ, իմ գերդաստանիս մէջ ոչ հայու, ոչ ալ քրիստոնէայի հետք կայ: Բայց կրնամ ըսել, որ հայերուն պատահած Մեծ աղէտին մասին, Անատոլուի յոյներու ապրած աղէտին մասին գրելու, ազգերու ցաւը ուսումնասիրելու եւ պատմական ճշմարտութիւնները ի յայտ բերելու համար, բաւական է խիղճ ունենալ: Ես, նախ եւ առաջ, որպէս մարդ կ' ուսումնասիրեմ այս թեմաները, ու գիրքեր կը գրեմ, որպէսզի ուրիշներ ալ իմանան: Իմ նախնական, միջնակարգ եւ բարձրագոյն կրթութիւնս Թուրքիոյ մէջ ստացած եմ: Թրքական ազգային կրթութեան սկզբունքներուն համաձայն գրուած պատմութեան դասագիրքեր կարդացած եմ: Ոչ միայն ոչ-մահմետական ժողովուրդներու գոյութեան, այլեւ ալեւիներու, դըրլպաշներու, քիւրտերու գոյութեան մասին նոյնիսկ ոչինչ գիտէինք»:

Քեմալ Եալչըն, շարունակելով իր խօսքը՝ իր գիրքի ծննդոցին մասին ըսաւ. «Ինձի հարց կու տան, թէ ինչպէ՞ս հասայ այս գիրքը գրելու: Դպրոցական կեանքէն, դասերէն դուրս իմ կարդացած գիրքերուն շնորհիւ սկսայ իմանալու ճշմարտութիւններ: Երբ 1980ին Գերմանիա գտնուեցայ, սկսայ ձերբագատուելու միակողմանի, անճիշդ գաղափարներէ: Եւ այս հարցին մէջ իմ վրայ ամենամեծ ազդեցութիւն ունեցած մարդը Մելինէ անունով թրքերէն լեզուի ուսուցչուհի ընկերուհիս էր: Երբ սկսայ ուսումնասիրելու Մելինէին կեանքը, հասկցայ, որ իր ապրած ցաւը իրականութեան մէջ հայերու ապրած ցաւերուն միայն մէկ մասն էր:

«Երկար ճամբորդութիւնս սկսայ Ամասիայէն, ուր

հանդիպեցայ հայուհիներու, որոնք քիւրտերու եւ թուրքերու հետ ամուսնացած էին. քօղարկուած հայ, քօղարկուած քրիստոնէայ էին անոնք»:

Ապա, թուրք գրողը իր իսկ հարցումին պատասխանելով՝ յայտնեց. «Իսկ վախի՞՞ զգացումիս մասին... Մարդ եմ եւ վախ կը զգամ. բայց այս տարիքիս, կը մերժեմ լռել, չխօսիլ կամ չլսել: Գիտեմ, որ պէտք է գրել այս բոլոր հարցումներուն մասին. եթէ ոչ՝ մեր զաւակները ինչպէ՞ս պիտի իմանան այս ճշմարտութիւններուն մասին: Երկիրս կը սիրեմ, ազգս կը սիրեմ: Այս պատճառով է, որ պէտք է իրականութեան մասին գրեմ»:

«Որպէս թուրք գրագէտ ներողութիւն կը խնդրեմ ձեզմէ. անէ՛ծք անոնց, որոնք ծրագրեցին եւ իրագործեցին այս մեծ աղէտը» ըսաւ Քեմալ Եալչըն: Ան համոզում յայտնեց, թէ Թուրքիոյ ուրացման քաղաքականութիւնը երկար կարելի չէ շարունակել: Եզրակացնելով ան յայտնեց ըսելով. «Նոյնիսկ եթէ մենք չտեսնենք այդ օրը, վստահ եմ, որ մեր զաւակները պիտի տեսնեն»:

Մօտ մէկ ժամ տեւած իր դասախօսութեան աւարտին, Քեմալ Եալչըն մակագրեց իր գիրքերը:



Խարկովի Հայ համայնքի յաջողութիւնները Փարիզում

2011-04-07

Փառատօնին մասնակցում էր նաեւ Ուկրաինայի Խարկով քաղաքի Հենրիխ

Ալթունեանի անուան հայկական կրթամշակութային կենտրոնի օարաքս Երզնի պատրի համոյթը, որը եւ զբաղեցրել է 2-րդ պատուաւոր տեղը: Պատանի վոկալիստների մրցոյթում առաջին տեղը գրաւել է Դիաննա Առաքելեանը եւ ստացել փառատօնի եզրափակիչ փուլին մասնակցելու իրաւունք-հաւաստագիր: Ինչպէս տեղեկացնում են փառատօնի կազմակերպիչները, եզրափակիչ փուլը տեղի կ'ունենայ Սանկտ Պետերբուրգ քաղաքում: Փառատօնի ծրագիրը ներառում էր մրցոյթներ նաեւ այլ անուանակարգերում, որոնց ժամանակ նոյնպէս աչքի ընկան խարկովցի մեր հայրենակիցները: Այսպէս, օրինակ, «լաւագոյն զգեստէ անուանակարգում մրցանակը նոյնպէս շնորհուեց Դիաննա Առաքելեանին, Կերպարուեստի գծով մրցանակներ ստացան Նարինէ Յովհաննիսեանը (1-ին տեղ), Մաւնէ Յովհաննիսեաւնը (1-ին տեղ), Եանայ Գրոմովան (2-րդ տեղ), Գեղանկաչութեան գծով՝ Աստեր Մանուկեանը – օ1-ին տեղօ, Ալթունեան-ստեփանեանը – օ1-ին տեղօ, Գագիկ Յարութիւնեանը – օ2-րդ տեղօ:

Նախագծի հովանաւորներն էին Սանկտ Պետերբուրգում Comedy Club Production մասնաճիւղը, Riv Cauche Musigue ասոցիացիան օՖրանսիայ. ք. Փարիզօ, օամառային ձիւնօ թատրոն մշակութային-լուսաւորական ասոցիացիան օՖրանսիայ, ք. Փարիզօ, Կրթութեան Զակոպանեան կենտրոնը օլեհաստան, ք. Զակոպանյեօ, օշնորհալի երիտասարդների միութիւնըօ օուկրահնայ, ք. Կիեւօ, Անհատական բարեգործական հիմնադրամը օեմմօ օռուսաստան, ք. Սանկտ Պետերբուրգօ, օպետրոսկանդօ կազմակերպութիւնը օշուէլիայ, ք. Ստոկհոլմօ, օVictoria

Travel կազմակերպությունը լեհաստան, ք. Վարշավա, ռիմի ծովեզր Սպը-ն ուկրաինայ, Ղրիմ, Petro Star կազմակերպությունը էստոնիայ, ք. Թալլին:

Ասատուր Խնկոյեան եւ Գայիանէ Համբարձումեան

ԱՄՆ հայոց եկեղեցիների առաջնորդներն ուղերձ են յղել Սբ Յարութեան եւ Հայոց ցեղասպանութեան օրերի կապակցութեամբ

2011-04-06

«որպէս քրիստոնէաներ մենք ապրիլի 24-ին կը նշենք Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը եւ որպէս հայեր կ'ոգեկոչենք մեր ժողովրդի վերածնունդն ու վերականգնումը մոխիրներից ու անգութ Յեղասպանութիւնից: Պիտի նշենք մեր յարութիւնը որպէս ժողովրդի, որ ենթակայ դարձաւ հալածանքների ու բռնադատութեան, որնք մէկ դար առաջ կը սպառնային ի սպառ բնաջնջել մեզ: Մեր ազգային յարութեամբ, մենք՝ զաւակները հինաւուրց ազգի, վառ կը պահենք եւ կը յարգենք նահատակների տեսլականն ու ոգին, անկորնչելի աւանդը:

Որպէս քրիստոնէութիւնը պետական կրօն առաջինն ընդունած երկրի զաւակներ, կոչ ենք անում մեր քրիստոնէայ բոլոր եղբայրներին ու քոյրերին եւ բոլոր կրօնների հաւատացեալներին, որպէսզի Սբ Յարութեան տօնի օրը մեզ հետ աղօթեն ի յիշատակ Օսմանեան կայսրութիւնում ցեղասպանութեան զոհ դարձած աւելի քան 2,5 մլն հայերի, ասորիների, պոնտացի յոյների, հոների: Աղօթենք նաեւ, որ արդարութիւնն ու խաղաղութիւնը տիրական դառնան մեր

աշխարհում է, -ասում է ուղերձում, հաղորդում է Ամերիկայի Արեւմտեան ափի Հայ Դատի յանձնախումբը:



Հայագգի Գլեղիս Բերեջիկեանը

նշանակուել է աւստրալական նահանգի տրանսպորտի նախարար

2011-04-06

Նահանգի լիբերալ-դեմոկրատական կոալիցիայի ներկայացուցիչ Բարրի Օ'Ֆարրելի խօսքով, Գլեղիս Բերեջիկեանն իր թիմի առանցքային անդամն է, գրում է armenia.com.au-ն:

Աւստրալիայի Հայ Դատի յանձնախմբի (ANC Australia) գործադիր տնօրէն Վարանտ Մեգերդիչեանի խօսքով, Գլեղիսի ձեռքբերումը հայ համայնքի համար հպարտութեան աղբիւր է: «մենք նրան ամենայն բարիք ենք ցանկանում իր նոր դերում եւ անհամբերութեամբ սպասում նրա հետ աշխատանքի շարունակութեանը Աւստրալիայի հայերի խնդիրների լուծման համար է, - ընդգծել է նա:



Ռումինահայութիւնն այսուհետ առաւել

համակարգուած կը գործի ի շահ

Հայաստանի եւ Արցախի

2011-04-05

Համայնքի հետ տեղում ծանօթանալու, գրասենեակի հիմնմանն առնչուող հարցերը կարգաւորելու եւ Հիմնադրամի գործունէութիւնը համայնքին առաւել բովանդակալից ներկայացնելու նպատակով մարտի 20-ին եռօրեայ աշխատանքային այցով Ռումինիայ էր մեկնել «հայաստանե համահայկական հիմնադրամի գործադիր

տնօրենի խորհրդական Հրաչ Յովհաննիսեանը:
Հանդիպումների շարքը մեկնարկեց Բուխարեստի հայկական եկեղեցում մատուցուած կիրակնօրեայ պատարագով, որի աւարտին Տաթև Վարդապետ Յակոբեանը ներկայացրեց 'Հայաստան' հիմնադրամի համահայկական առաքելութիւնը եւ Հրաչ Յովհաննիսեանի այցելութեան նպատակը: Իր ողջոյնի խօսքում պարոն Յովհաննիսեանը շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան համար եւ նշեց, որ Ռումինիայի հայ համայնքի միասնականութիւնն առաւել վառ կը դրսեւորուի մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդմամբ եւ հայրենաշինութեան գործին իր ակտիւ մասնակցութեամբ:

«2010-ին ռումինահայերի փոքր համայնքն աւելի քան 14 հազար ԱՄՆ դոլարի նուիրատուութիւն կատարեց Հիմնադրամին: Գումարը կ'ուղղուի 2011թ-ին իրականացուող մեր ծրագրերին: Ռումինիայում գրասենեակի հիմնումն այնտեղ բնակուող մեր հայրենակիցներին ոչ միայն կը կապի հայրենիքի հետ, այլեւ հնարաւորութիւն կը տայ մասնակցել հայրենիքի բարգաւաճման ու հզօրացման գործին: Մենք ուժեղ ենք, երբ մէկտեղում ենք մեր ջանքերը մէկ ընդհանուր նպատակի շուրջէ, - ասում է «հայաստանէ համահայկական հիմնադրամի տնօրեն Արա Վարդանեանը:

Կոնստանցիայի փոքրաթիւ համայնքը եւս ջերմ ընդունելութեան արժանացրեց Հիմնադրամի ներկայացուցչին: Հանգամանքների բերումով այստեղ հիմնուած մեր հայրենակիցները, որոնցից շատերը 50-60-ական թուականներին էին վերջին անգամ եղել հայրենիքում, յուզուած էին թե՛ հայաստանեան հիւրի այցելութիւնից, եւ թե՛

հայրենիքի մասին իրենց յիշողութիւններից: Համայնքի ղեկավար Աւետիս ա.քին. Մանդալեանի խօսքով՝ Կոնստանցիայի նախկին ստուար համայնքից այսօր շուրջ 200 հոգի է մնացել: Աւագ սերունդը գնալով պակասում է, իսկ երիտասարդները մեկնում են արտերկիր՝ աշխատելու կամ ուսում ստանալու: Կարելորելով հայրենիքի հետ կապերի ակտիւացումը՝ Տէր հայրը յոյս յայտնեց, որ Կոնստանցիայի փոքրաթիւ համայնքն իր համեստ լուման կ'ունենայ 'Հայաստան' հիմնադրամի առաջիկայ ծրագրերում: Նրա խօսքով՝ համայնքի աւագ ներկայացուցիչները եւ անձամբ ինքը քաջալերում են համայնքի անդամներին եկեղեցի յաճախել եւ ամէն գնով պահպանել իրենց լեզուն եւ ինքնութիւնը:

Այցելութեան աւարտին Հ.Յովհաննիսեանը հանդիպեց «արարատէ շաբաթաթերթի եւ «նոր կ'եանքէ ամսաթերթի խմբագիրների հետ, ովքեր յանձն առան ամէն կերպ աջակցել Հիմնադրամի գործունէութիւնը լուսաբանող հաղորդագրութիւնների տարածմանը համայնքում: «հայաստանէ համահայկական հիմնադրամն արդէն իսկ աշխարհին ներկայանում է 18 երկրում գործող 21 տեղական մարմիններով, ասում է հիմնադրամի հաղորդագրութեան մէջ:



Թուրքիայում Անատոլիայի հայերի դէմ պայքարի գաղտնի հետախուզութիւն էր ստեղծուել

2011-04-05

Այդ է հետեւում WikiLeaks կայքի կողմից

հրապարակուած եւ թուրքական Taraf թերթում տպագրուած դիւանագիտական հեռագրերից: Անկարայում ԱՄՆ դեսպանատան նախկին ռազմական քարտուղար Ռոբերտ Դեյչի դիւանագիտական հեռագիրն ուղարկուել է 2004 թուականի դեկտեմբերին եւ վերնագրուած է «հայեացք թուրքական ռազմական հետախուզութեան աշխատանքին՝ մտավախութիւններ Իրաքի, PKK պատճառով, պառանոյայ, հականատուական քարոզարշաւէ:

Ինչպէս հետեւում է դիւանագիտական հեռագրից, Դեյչը գրուցել է անանուն թուրքական աղբիւրի հետ, որը 12 տարի աշխատել է ռազմական հետախուզութիւնում: Այդ աղբիւրը ներկայացրել է JITEM անունը կրող գաղտնի կազմակերպութեան 40 աշխատակիցների հետ գրոյցները: Տեղեկատուութեան համաձայն, JITEM-ը ստեղծուել է հարաւարեւելեան Անատոլիայում «հայկական սեպարատիզմիէ դէմ պայքարի համար: JITEM-ի աշխատակիցներին զարմացրել էր հայերի դէմ պայքարի հրամանը, քանի որ շատ հայեր փոխել են իրենց անուններն ու թաքցնում են էթնիկ ծագումը 1915 թուականի իրադարձութիւններից յետոյ: Հեռագրում նշում էր, որ չնայած դրան, հայերի ներկայութիւնը հարաւարեւելեան Անատոլիայում անհանգստացնում է Թուրքիային, գրում է թուրքական Hurriyet Daily News-ը:



**Կալկաթայում նշուեց Հայոց
մարդասիրական ճեմարանի
հիմնադրման 190-ամեակը**

2011-04-04

Բացման խօսքով հանդէս եկաւ

Ճեմարանի կրթական տնօրէնը: Այնուհետեւ
Մարդասիրականի պարախումբը ներկայացրեց մի գեղեցիկ
հնդկական պար, որին յաջորդեց կրթօջախի երգչախմբի
ելոյթը: Ապա 2010-2011 ուսումնական տարուայ
շրջանաւարտներին յանձնուեց Ճեմարանի անունը կրող
Ժամացոյց-ներ, իսկ բարձր առաջադիմութիւն ունեցող
աշակերտները պարգեւատրուեցին գովասանագրերով եւ
ստացան խրախուսական նուէրներ:

Հանդիսութեան ընթացքում ցուցադրուեց Հնդկահայքի
երեւելիների եւ հայ-հնդկական յարաբերութիւնների մասին
պատմող տեսանիւթ: Իսկ հանդիսութեան բարձրակետն էր Ն.
Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի
օրհնութեամբ Կալկաթայում լոյս տեսած «հնդկահայքէ
երկլեզու (հայերեն-անգլերէն) երկրորդ տարեգիրքը, որը
ներկայացրեց գրքի հիմնադիր-հրատա-րակիչ, հնդկահայոց
հոգեւոր հովիւ, Հայոց մարդասիրական Ճեմարանի կառա-
վարիչ Հայր Խորէն Յովհաննիսեանը: «հնդկահայքէ 2010-ում
խտացել են հնդկահայոց հոգեւոր հովուութեան եւ
Հնդկաստանում «կտոր մը Հայաստանիէ՝ Հայոց
մարդասիրական Ճեմարանի անցուդարձը, մեր շնորհալի
ուսանողների ուսումնական ու մարզական նուաճումները:
Տարեգրքում տեղ են գտել հնդկահայ համայնքի
հարիւրամեակների պատմութիւնը լուսաբանող յօդուածներ,
ինչպէս նաեւ աշխարհի տարբեր ծագերից անդրանիկ
հրատարակութիւնը գնահատող եւ արժեւորող նամակներ,
որոնք պարտաւորեցնող էին եւ իրան «հնդկահայքէ 2010-ը
կեանքի կոչելու գործում: (Հայր Խորէն)
Մշակութային մասի աւարտին ներկաները հիւրասիրուեցին

յոբելեանական տորթով:

Ձեռնարկին ներկայ էին ճեմարանի աշակերտութիւնը, ուսուցիչները, պաշ-տօնէութիւնը, Սուրբ Նազարէթ Մայր եկեղեցու վարչութեան անդամները, հա-մայնքի ներկայացուցիչներ եւ հիւրեր:

Հայոց մարդասիրական ճեմարանը հիմնադրուել է 1821 թուականի ապրիլի 2-ին՝ Աստուածատուր Մուրադխանեանի եւ Մնացական Վարդանեանի բարերարութեամբ: Կրթօջախը Կ'ալկաթայի երկրորդ ամենահին դպրոցն է: Հանդիսութիւնը յարգանքի տուրք էր դպրոցի հիմնադիրների պայծառ յիշատակին:

Հասարակութիւն



Ամենայն Հայոց կաթողիկոսն իր գնահատանքն է յայտնել Հայ կանանց միջազգային միութեան անդամներին
2011-04-07

Շնորհակալութիւն յայտնելով

ընդունելութեան համար՝ ՀՀ Սփյուռքի նախարարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց միութեան նպատակը եւ գործունէութիւնը՝ ի զօրացումն ազգային արժէքների, դրանում մեծապէս կարեւորելով եկեղեցի-պետութիւն, եկեղեցի-հասարակութիւն, եկեղեցի-ընտանիք յարաբերութիւնների ամրապնդումը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը յայտնեց միութեան անդամներին եւ շնորհաւորեց նրանց առաջիկայ տօնի առիթով՝ մաղթելով, որ հայ կինն իր լուսաւոր


կերպարով ու հոգու ջերմութեամբ ամենուրեք գեղեցկացնի հայ կեանքը: «Ֆառապանձ կերպար է կերտել հայ կինը պատմութեան մէջ իր արիութեամբ, նուիրումով եւ հաւատարմութեամբ ազգային-հոգեւոր արժէքներին: Ուրախ ենք, որ այսօր եւս նոյն դերակատարութիւնը փառքով ու պատուով տանում է հայ կինը թէ՛ Հայրենիքում եւ թէ՛ Մփիւռքումէ, - նշեց Նորին Սրբութիւնը:

Անդրադառնալով Աւետման եւ Մայրութեան տօների խորհրդին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ դրանք արտայայտութիւնն են այն ջերմ գգացումների եւ գիտակցութեան, որ հայ մարդն ունի հանդէպ հայ կինը, նրա կարեւոր առաքելութեանը ազգային կեանքում: Նորին Սրբութիւնը խօսեց նաեւ եկեղեցի-ընտանիք կարեւոր կապի մասին՝ նշելով, որ Եկեղեցու, հոգեւոր արժէքների հանդէպ ընտանիքի կնոջ եւ մօր կեցուածքով է մեծապէս պայմանաւորում հասարակութեան մէջ բարեփոխումները դէպի բարին, աստուածօրհնեալ եւ աստուածահաճոյ կեանքը:

Միութեան անդամներն իրենց հերթին կարեւորեցին Եկեղեցու կարեւոր դերակատարութիւնը հայ ընտանիքի ամրութեան գործում, պատրաստակամութիւն յայտնեցին զօրակցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին տարբեր ծրագրերում:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց միութեան անդամների հարցերին՝ լուսաբանութիւններ տուեց հասարակութեանը յուզող տարբեր խնդիրների առնչութեամբ, յայտնում է Սբ Էջմիածնի մամլոյ դիւանը:

Մշակոյթ



Երևանում կը քացուի Գլենդեյլի «աթանեանէ արուեստի կենտրոնի ցուցահանդէսը

2011-04-09

Սա Գլենդեյլի Աթանեան արուեստի կենտրոնի եւ Երևանի Գեղագիտութեան ազգային կենտրոնի համատեղ նախագիծն է, որին պատրաստուում էին 2010 թ. սեպտեմբերից: Նոյն ցուցահանդէսը կը քացուի ամռանը Լոս Անջելէսում: Այս առիթով «աթանեանէ արուեստի կենտրոնը հրատարակել է գունազարդ ալբոմ, որի մէջ զետեղուած են բոլոր մասնակիցների ստեղծագործութիւնները:

«աթանեանէ արուեստի կենտրոնը ամէն տարի աչքի է ընկել քազմաթիւ մրցոյթներում յաղթանակներով: 2011 թուականին եւս կենտրոնի աշակերտները տարբեր մրցոյթներում արձանագրեցին նոր յաջողութիւններ, արժանացան բարձրագոյն պարգէւների: Դրանց թւում է Ստեֆանի Գրիգորեանի կ'ոմպոզիցիան, որը հարիւրաւոր պատանեկան ստեղծագործութիւններից ընտրուել է տեղադրուել է քազմահազար տպաքանակ ունեցող «Sax Art» կատալոգի շապիկին: Ստեֆանիի «ես սիրում եմ կ'ապիկներին» աշխատանքը նախապէս արժանացել էր «Sacura of America» իղականճանկարների մրցոյթի մրցանակին, որից յետոյ «Sax Art»-ն ընտրել էր այդ գործն իր կատալոգի շապիկին տեղադրելու համար:

Գլենդեյլի քաղաքապետարանի Արուեստի եւ մշակոյթի

բաժնի «մարուր պահենք Գլենդէյլը տարեկան մրցոյթի 2011 թ. ֆինալիստներ դարձան կենտրոնի սաներ Առնէլլայ Քալանթարեանը եւ Տանեա Ռոստամին, իսկ «աթանեանէ արուեստի կենտրոնն արժանացաւ յատուկ մրցանակի:

Աիկ Մարութեան. Արեւմտեան Հայաստանի քարքառները ոչնչացման եզրին է

2011-04-07

Միաժամանակ, նա նշել է, որ 1915-ին Օսմանեան կայսրութիւնում Հայոց ցեղասպանութիւնը նախօրօք պլանաւորուած գործողութիւն էր, որի նպատակը ոչ միայն հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումն էր, այլ նաեւ ժողովրդի լիակատար ոչնչացումը: «օսմանեան կայսրութիւնում կատարուածը կարելի է նաեւ դիտարկել որպէս լեզուասպանութիւնէ,- ասել է նա եւ յաւելել, որ Հայոց ցեղասպանութիւնից յետոյ յետագայ տարիներին Թուրքիան ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները, այդ թւում փոխել է գիւղերի, լճերի տեղանունները, որպէսզի հայերից ոչ մի հետք չմնայ: Նրա խօսքերով, քարքառագիտական քարտեզ ստեղծելու դէպքում հնարաւոր կը լինի Թուրքիային կանչել Հաագայի դատարան:

Անդրադառնալով գրական լեզուի ներկայ որակին՝ Մարութեանն ասել է, որ այն այսօր սարսափելի վիճակում է: Նրա խօսքերով, մասնաւորապէս, գրական լեզուն աղաւաղում է հայկական հեռուստաշոունների եւ սերիալների միջոցով: Այդ առումով նա նշել է, որ այդ հարցը պետական մօտեցում է պահանջում:



**Էմմիի Եւրատեսիլեան փրոմո-արշար
յագեցած է, նա կ'այցելի Կիւեւ, Քիշնեւ,
Նիդեռլանդներ, Աթէնք եւ Վարշաւայ**
2011-04-04

Հայաստանը Եւրատեսիլ 2011-ին կը ներկայացնի երգչուհի Էմմին, ով ելոյթ կ'ունենայ «Boom-Boom» երգով (երաժշտութիւն՝ Apricota խմբի, բառերը՝ Սօսի Խանիկեանի, գործիքաւորումը՝ Արա Թորոսեանի): Այս երգն ընտրուել էր մարտի 5-ին Հանրային հեռուստաընկերութեան եթերում SMS քուէարկութեան եւ պրոֆէսիոնալ ժւրիի որոշմամբ՝ 50/50 յարաբերութեամբ: Էմմին ելոյթ կ'ունենայ մայիսի 10-ին:

Այս տարի Դիւսելդորֆում կայանալիք Եւրատեսիլ 2011-ին կը մասնակցի 43 երկրի ներկայացուցիչ: Մասնակից երկրներն արդէն ընտրել են իրենց երգիչ-երգչուհի ներկայացուցիչներին: Ինչպէս յայտնում է մրցոյթի պաշտօնական կայքը, Եւրոպական հեռարձակողների միութիւնը արդէն ստացել է բոլոր մասնակիցների երգերը:

Եւրատեսիլ 2010-ին մասնակցել էր 39 երկիր:

Յայտարարութիւններ



**ՀՀ սփիւռքի նախարարութեան «հայ կնոջ
դերը Սփիւռքումէ կլոր սեղան**
2011-04-06

Կլոր սեղանը կը վարի ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը:

Կը քննարկուեն «հայրենադարձութիւնը եւ հայ կ'իներէ, «կիներ
աւանդական եւ արդի հասարակութեան մէջ Հայաստանում եւ
Սփիւռքումէ թեմաները:

Զեկոյցներ կը ներկայացնեն ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ
ազգագրութեան ինստիտուտից՝ պ.գ.թ. Արմէնուհի
Ստեփանեանը եւ պ.գ.թ. Սուետլանայ Պօղոսեանը:

Կլոր սեղանին կը մասնակցեն ԵՊՀ սփիւռքագիտութեան
ամբիոնի վարիչ Իւրայ Աւետիսեանը, ՀՀ ազգային արխիւի
տնօրէն Ամատունի Վիրաբեանը, ՀՀ ազգային արխիւի
փոխտնօրէն Էդգար Յովհաննիսեանը, ԳԱԱ Պատմութեան
ինստիտուտից՝ պ.գ.դ. Էդուարդ Մելքոնեանը, ԵՊՀ
պատմութեան ֆակուլտետի դեկան պ.գ.դ., Էդիկ Սինասեանը,
պատմաբան Գէորգ Եազըճեանը, ՀՀ սփիւռքի
նախարարութեան համահայկական ծրագրերի վարչութեան
գլխակրթական ծրագրերի բաժնի պետ Սիրվարդ
Համբարեանը, Համազգային հայ կրթական, մշակութային
միութեան Հայաստանի մասնաճիւղի տնօրէն Լիլիթ
Գալստեանը եւ այլք: